

թէ դազաղով մը՝ այլ մահիճի վրայ: Գալիլիական սո-  
վորութեան մը համաձայն, մեռելին կը հետեւին ըստ  
երեւոյթին, երիտասարդին բարեկամները ի դովեստ  
հանգուցեալին հնչեցնելով ողբերգ մը, իբր յոյս եւ  
մխիթարութիւն մօրը: Բայց Տապիրաթի ճանապարհին  
վրայ Յիսուս երեւնալով ըսաւ յուղարկաւորութեան  
հերոսին. «Տալիթա կուամի» (ով երիտասարդ ոտքի ել):  
Այն ատեն ան սկսաւ խօսիլ (Ղուկ. է. 14): Վերջին  
դարերուն ցոյց կուտային ուխտաւորներուն Նայինի  
երիտասարդին յատկացուած գերեզմանը, ինչպէս նաև  
անոր մօր տունը՝ որ եկեղեցիի վերածուած էր (Dal-  
էջ 257-258):

4. Կանայի աւանդութիւնները. — Յիսուս Կանայի  
մէջ սկսաւ իր հրապարակային կեանքը իր աշակերտ-  
ներուն հետ ներկայ ըլլալով հարսնիքին: Փրկիչը մօրը  
դիմումին վրայ գործեց իր առաջին հրաշքը որ մեծ  
հոչակ ունեցաւ բոլոր Պաղեստինի մէջ: Նմանապէս  
Կանայի մէջ էր որ կատարեց իր երկրորդ հրաշքը,  
հեռուէն բժշկելով Կափառնաուամի մէջ ծանրապէս հի-  
ւանդ՝ հարիւրապետին զաւակը: Յովհաննէս Աւետա-  
րանիչ կը ճշդէ թէ Նաթանայէլ (Ս. Բարդուղիմէոս  
առաքեալը) Կանացի էր: Քրիստոնեաները հին դարե-  
րէն սկսեալ այս դէպքերուն յիշատակներ հաստատած  
են նուիրական շէնքերով, որոնց թանկագին մնացորդ-  
ները ցարգ կը տեսնուին ի Քեֆր Կաննա:

Աւետարանին մէջ այս տեղը կը կոչուի Կանա Գա-  
լիլացոյց՝ որոշելու համար Ասէրի Կաննա քաղաքէն  
զոր ոմանք կը նոյնացնեն հին Տիւրոսէն 12 քմ. դէպի  
հարաւ-արեւելք գտնուած Կանա գիւղին հետ: Պաւ-  
ղինէ և ուրիշ ուխտաւորներ կը գրեն. «Նազարէթէն